

եւ անինչ մեռաւ այն իրաւաւոր եւ գովին ամենայնիւ, եւ այն չեւ հասեալ ի ծիրութիւն, որոյ հայրն եւ հորեղբայրն զհարկաւմնիք անցեալ էին ի վախճանեն, մեզ եթող զմեծագին կարծեցեալ թագ իւր, որ էր ընդեւելեալ սուտ ակամբք եւ սուտ մարգարտօք: Ի վաղէ անդր ի դեկտ. 23 ըստ փափաքանաց իւրոց, որ ի մանկութեան տենչացեալ էր գալ ի համայնր տապանի հիմնադրին մեր Միթարայ Աբայի, թաղեցաւ մօտ առ նմա յեկեղեցւոյ մերում, ի մէջ դասու ըստ հարաւակողմի, յորոյ վերայ եղաւ տապանագիր՝ յորինեալ ի ծերունի Հ. Վրթանիսէ մերմէ (համառօտ, զի սակաւ լիցին ծախք քանդակման), օրինակ զայս.

ԲԵՐԲՈՒՆ ԿԵՐԵՊԵՏ ՄԵԼՔԵԱՆ

ՀԵՆՁԵՑԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԻՔԻԼԶ

ՔԵՂԱՔԻ

ԹՈՂԵԱՆ ԶԱՄԵՆԵՑՆ Ի ՀՌՕՄ

ՊԵՆԴԻՍԻ

ԱՆՏԻ Ի ՎԵՆԵԺ. ՈՐ ԵՒ ԱՍՏ

ՀԱՆԳՁԻ

ՅԱՄԻ ՏԵԼԵՐ. 1790. ԴԵԿՏ. 22

Տապանագիրս հրատարակած է՝

Հ. Թորոսեան, Վարք Միթարայ, Վենետ. 1901, էջ 477. տես նաեւ Հ. Տաշեան, Յուդայ, էջ 462բ:

Հ. ԳՐ. ԳԵԼԵՄԵԼԵՆԱՆ



Պ Ա Յ Մ Ա Վ Ա Ն

Ս. ՅԱԿՈՐ

ԱՂԳՈՑԻՆ ՀԻՒՆԵՊԵՆՈՑ

(ԸՐԻՆՆԱԿԱՆ)

ԺԸ.

ԺԵ. ՀՈՐԱԲԵՐՁՈՒԹԻՒՆ

19 (5—1907

Մահճիւլ Պետրոս Ատենապետ
Աքիկեան Յովսէփ Ժ. Վ. դեր Մտենապետ
եւ Ատենադպիր

Շէրպէթեան Պողոս Գանձապետ
Ճամճեան Պողոս Հաշտակալ
Մոմճեան Պողոս Քննիչ

Հոգաբարձութիւնս անցեալ տարւոյ Նոյ. 7ին պաշտօնի անցնելով՝ առաջին գումարման մէջ նախորդ Հոգաբարձութենէն հրեք անդամք, Գարտաշեան, Պըյրքեան եւ Բիշեան Հ. Եղիա Մ. Վ. ներկայ կը գտնուին յանձնելու համար իրենց պաշտօնը: Գարտաշեան կարգ մը բացաւ արութիւններ կու տայ Անկիւննոցիս պահանջից եւ պարտուց եւ ատենագրութեանց մէջ ինչ ինչ որոշողութեանց անխլատակ մնալու վրայ. եւ ապա քանի մը պաշտօնական գրութիւններ եւ Հոգաբարձութեան զմուռը կը յանձնէ Ս. Ժորգոյ Ատենապետին, եւ կար, զօրութիւն եւ յաջողութիւն մաղթելով նորընտիր Հոգաբարձութեան՝ իր ընկերներով միասին կը մեկնի: Այս գումարման մէջ կ'որոշուի ատենագրութեանց ներքեւ անպակաս ստորագրել եւ Անկեւնոցին հաշիւները կրկնատուարի վերածել, որուն համար պաշտօնի կը կոչուի Արիկեան Գեորգ հաշուագէտը, եւ ասկէ յետոյ ոեւէ փոխանցիկ հիւանդութեամբ վարակեալը եւ ծննդական էին հիւանդանոց չընդունել (Դւ. Ս. Եջ. ասն.)

Յանձնախումբին տեղեկագիրը Ազգ. վարչութենէ հաստատուելով՝ մտադրեալ 10 տու. ներու շինութեան ձեռք կը զարուի 12 Նոյ. Էլմա-տաղի փողոցին մէջ խելով բանջարեղէնները, որ տնկածն էին շինուելիք շէնքերուն հողին վրայ, որուն համար Հոգաբարձութիւնը կը տուժէ պարտեզային շահու զենք ոսկի օսմ. 40, ասանկով Ս. Թադրայ երկրին հիւսիսային կողմը կառուանելով ամբողջապէս կը փակուի: Այս շինուածոց ճարտարապետը, ըստ որոշողութեան Ազգ. վրչ. Ժողովոյ, եղաւ Լեւոն Կիւրեղեան, որ շինութեան պահուն ժողովուրդնէ ամբաստանուեցաւ վարչութեան առջեւ իբրեւ խարդախ շինուածանիթոց, որուն վրայ քննիչ զեկուեցան քանի մը ճարտարապետներ, որոնք զինքը արդար հանդիմն:

Նոյ. 23ի Նիստին ատենագրութենէն ալ կը տեսնուի վարչութեան ուրիշ մէկ որոշողութիւնը, որուն զօրութեամբ գրուել է գերեզմանատան Հոգաբարձութեան կատարել Ս. Թադրայ խորհրդին խնդիրը, որ է ցուցունել յատուկ թաւ մը Անկիւննոցին անտէր ննջեցելոց համար: Այս խնդիրը եղած էր նախորդ Ատենապետէն: Իսկ Հոգաբարձութեանս Գեկ. 5 Նիստին մէջ կը գտնենք բոլոր մը՝ բարձեալ Ազգ. վարչութենէ Հոգաբարձուաց դէմ, որ խնջաբարբար ծախած էին 35 օսմ. ոսկւոյ կէս տուն մը ի Թէքնէճի փողոց, որուն պատաս-

խան տրուեի է՝ թէ Ազգ. Կաննագրութիւնը կ'արտօնէ ամէն թաղականութեանց եւ Հոգաբարձութեանց մինչեւ 50 ոսկւոյ արժողութեամբ առուծածները առանց վարչութեան հարցնելու կատարել: Ցարդոյ սկիզբն ալ 1906 Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի օրկան ՄԵԶՄՈՒՍԻ ԱՅՊԱՐ օրաթերթին միջոցաւ, ըստ սովորութեան եւ հրատարակութիւն Անկէլանոցի նախընթաց տարւոյ ընծայարեաներուն անունները եւ անոնց նուէրներուն քանակը եւ օրակը:

Առաջիկայ Ս. Զատիկի առթիւ ի նպաստ Անկէլանոցի բացուած Հանգանակութեան մասնակց ընել ուզելով նաեւ Պարիսաբնակ աղգայտիները՝ Հոգաբարձութիւնը Յունուար 22 թուակիր նամակաւ գործակցութիւն կը խնդրէ թընկերեան եղբայրներէն ի Պարիս, որոնց հաճութեան վրայ Մարտ 1ին կը ղըկէ յատուկ բաժնետոմսեր յետագայ հացններուն, որոնցմէ պիտի յիշենք հոս զանոյր միայն որ նախընթաց ցուցակէն կը պակասին եւ որոնց մասնակցութեամբ այս տարուան Հանգանակութենէն կը գոյնանայ 21.982 դահկան:

Mr. Edouard Bey Alexanian, Avenue Kleber 73
 „ Ervant Damad, Avenue de Villiers 47
 „ Jean Azarian, Rue Valantin 10 Haüy
 „ G. Azarian, Rue Marbeuf 7.
 „ Antonio Brimo, Rue Lafayette 54
 „ Armand Damad, Rue Montalivel 18
 „ Antoin Foltz, Rue de Chaussée d'Antin 57
 „ J. Iskender, Rue de la Tour d'Avergne 36
 „ Paul Abdullah, Rue Royale 5
 „ A. Gourdjian, Rue d'Orléans 23 Neuilly
 „ J. Tossounian, Rue Lafayette, Hotel moderne.

(Դւ. Ս. Եփ. Տր. 192.)

Ազգ. վըշ. ժողովոյ յիշեալ ամսոյ 28 նիստին մէջ վերջապէս կը կարգադրուին Անկէլանոցի բժշկապետ Գոկոս. Գ. Զօհրապի եւ Հոգաբարձութեան միջեւ փոխանակուած նամակները, որոնց ընթիւնցումէն կը հասկցուի թէ այս վերջինը գաղտնիքներ կ'ուզէ Յունուարի սկիզբէն Զօհրապի ամսաթոշակը, որ արդէն տարի մը ձրի ծառայած էր Անկէլանոցի դրամական անձկութեան պատճառաւ, հանգերձ այսու զոգորորը Ազգ. վըշ. ժողովոյ նկատառութեան կ'ուզէր թողուլ խնդիրը: Եւ ըստ այսմ՝ եղբուրթիւնը լըծօրէն քննուելով վարչութեան մէջ՝ կ'որոշուի որ այն նամակաց ամէնքն ալ եւս ղըկուին ի Ս. Եփ. Տր. յանձնարարելով Հոգա-

բարձութեան օր իր միտքը որոշակի պարզէ Հոգեւոր Տիրոջ՝ Ասոր վրայ ինչ կը գրուի յայտնի չէ, միայն թէ Գոկոս. Զօհրապ յանձն կ'առնու տարի մ'իւս ձրիարար ծառայել:

Իսկ Անկէլանոցի ժողովոյց ատենագրութեանց մէջ կը կարդանք. (Դւ. Ս. Եփ. Տր. 194) որ օտարաբնակ շուրջ 65 տարուան օրիորդ մը (Չամիչ Անիկի Տուտուն) Հիւրմիւլ Արտուշէս էֆ. ի միջոցաւ Ազգ. վըշ. ժողովոյն Մարտ 11 նիստին մէջ կ'առաջարկէ Անկէլանոցի նուիրել 3000 օսմ. ոսկի յարակից հիմա պայմաններով, զորս պիտի իմանաք յետագայ նամակէն:

ՊԱՏՐԻԱՐԿԱԲԱՆՆԵՐ Գ. Պոլոս, 15 Մարտ 1905,
 ԿԱԹՈՒԼԻԿԵ ԱՅՈՑՑ

Մեծաշուք Տէր

Ինչպէս ծանօթ է Ձեզ Հասարակութեան վարչական ժողովոյ ամսոյց 11 օրակաթ օր Կաթողիկոսարանին սրահին մէջ դուռնաբուսած արտասովոր նիստին մէջ, ուր հրաւիրուած էին Ս. Եփ. Տր. Անկէլանոցի Հոգաբարձութեան անդամք ամբողջակաւ եւ Չէր Մեծաշուք Տէրութիւնն, Չէր կողմանէ եղած նուիրատուութեան առաջարկին հետեւեալ պայմաններն. ընտելութեան ենթարկուելով՝ թէ վարչական ժողովոյ եւ թէ Անկէլանոցի Հոգաբարձութեան անդամք միայնակ եւ միասին հաւանութեան ընդունեցան:

1. Բարեբաւ Տիրին մը 3000 օսմ. ոսկւոյ դուռնա օր կը նուիրէ Ս. Եփ. Տր. Անկէլանոցին շնորհ ծառքուն անկէլանոցի գաղտնի Տիրին վրայ շէնք մը կառուցանելու նպատակաւ:

2. Անկէլանոցը պարտաւոր պիտի ըլլայ յիշեալ Տիրինը տարեկան 8% ութ տո հարկէր առկու մը վճարել 3000 ոսկւոյ վրայ, այսինքն տարեկան 240 ոսկի մինչեւ իրեն մահը, եւ ասիկայ թէ Հոգաբարձութեան եւ թէ Չէր կողմանէ ընդունելի դատուած է ապահովութեամբ:

3. Երամար դատուած եղանակաւ յիշատակագիր մը պիտի գրուի այս նուիրատուութեան համար:

4. Յիշեալ Տիրինը մահուանէ ետքը այն դուռնաքին եկամուտը ամբողջովն պիտի յատկացուի, եթէ կարելի է, արհեստանոցի մը, եւ եթէ անբաւական կամ անկարելի դատուի, հիւանդաց կամ աղքատաց վիճակին բարեւումն:

5. Տիրինը մահուանէ յետոյ մէկ ամիս ամէն օր անոր հոգւոյն համար պիտի մատուցուի թիւ պատարագ մը եւ ամէն տարի ծայնաւոր պատարագ մը Զատիկին երբորը այսինքն կանանչ կրակի օրը, իրեն եւ իրեն ընտանեաց մեռեալ անդամաց հոգւոյն ի յիշատակ:

Առ այս վըշ. ժողովոյն կողմանէ Եանձնա ժողով մը կարգուեցաւ հետեւեալ անձինքներէ բաղկացած. — վարչական ժողովոյ անդամներէն Մեծաշուք Տէրը Եփ. Եփ. Գաբուշան,

Գրիգոր էֆ. Սինապեան, Վիշն էֆ. Գասապեան. Ս. Թակոր Անկելանոցի Հոգաբարձու-թեան անդամներէն Պետրոս էֆ. Մաճհուպեան, Պողոս էֆ. Շէրպէթճեան, Պողոս էֆ. Մոմճեան եւ Զեք Մեծաշուք Տէրութիւնը յիշեալ Տիկե-նոյ կողմանէ ներկայացուցիւ:

Այս Թանձնաժողովը՝ որուն լիազօր իշխա-նութիւն տրուեցաւ վարչական ժողովոյն կող-մանէ, կարող պիտի ըլլայ վերոյիշեալ նախա-պետութիւնն ընդունիլ յիշեալ պայմաններով, առնուլ եւ տալ պէտք եղած օրինական երաշ-խաւորութիւններն եւ կրնայ զայմանաբարու-թիւններն, եւ անմիջապէս ձեռնարկել եւ ի գլուխ Տաննէ անոր գործադրութիւնը:

Այս ամէնը պայտօնական եղանակաւ Զեք ծանուցանելով՝ եւ յիշեալ բարերար Տիկեմը եւ Զեգի Մեք Հայրապետական օրհնութիւնն ի բոլոր սրտէ շնորհելով՝ ձեռնդ

Մեծաշուք Տեառնդ

Պողոս Պետրոս ԺԲ. Սապպաղեան
կաթ. Պատրիարք Արեւիկոյ

Մեծաշուք Տէր
Արտաշէս էֆ. Հիւրմիւլդ
(Գւ. Պար. ասն. վըշ. ԺԷ.)

Թաղորդ օրը Մարտ 16 Թանձնաժողովս իր առաջին նիստը կատարելով Հիւրմիւլդ Արտաշէս էֆ.ի գրասենեակը ի Ղաթաթիա՝ Գարտաշեան Յովհաննէսին եւ Սինապեան Գրիգորին կը յան-ձնարարեն պէտք եղած գրութիւնները պատ-րաստել եւ բարերարին ղեկել. Նկատելով միան-գամայն որ շինուելու յարկաբաժինը 6000 օսմ. ոսկոյն կը կալ տաի, նախընթաց կրկին որոշու-մէնը երրորդ անգամ ըլլալով կը հաստատուէ, որ է 50% չինդ. առ Տարխուր տոկոսով բաժանորդ-դադրութիւն մը բանալ Հասարակութեան մէջ: Եւ արգեամբ ալ այս երկու անձինք ամէն ինչ պիտի թող կատարելով՝ ի գիտութիւն վարչակա-նին Գարտաշեան յատուկ ժողովոյն կը ծանու-ցանէ՝ թէ Թանձնաժողովը կառուցութիւն յար-կաբաժինն համար ինչ որ պէտք էր աւարտած էր, եւ մտաբեր շինութեան պիտի ձեռնարկէր: Այդ յաւելու նաեւ թէ իր մէջէն երկու գանձա-կցաւ ընտրած էր, այսինքն Մաճհուպեան Պե-տրոս եւ Շէրպէթճեան Պողոս էֆ.ներսինները, որոնք գրաձեռքը գանձելով՝ գրամատան մը մէջ զետեղելու պատճառ պիտի ունենային: Բայց Սապ-պաղեան Վ. Պատրիարք Հայր Մայիս 6 վար-չութեան ժողովոյն մէջ կը յայտարարէ՝ թէ նախորդ օրը Զաւիշ Աննայի շնորհուած 3000 օսմ. ոսկոյն փոխանակագիրը ընդունած ըլլալով՝ յարկաբաժին շինութեան Թանձնաժողովոյն յան-ձնած էր: Ասոր վըսյ Գարտաշեան այրեալ

պատճառներով կը հրաժարի Թանձնաժողովն անդամակցութենէն, որուն տեղը կը փոխանակէ վարչական տնօրէնութեամբ ֆիլիպպոսեան Թո-հան: Այս ժողովոյս մէջ Զաւիշ Աննայի գոր-ծակատար Արտաշէս էֆ. Հիւրմիւլդ, ուր ինքն եւս հրաւիրուած էր, կը յայտարարէ՝ թէ նոյն բարերար անձը մեկ տարուան տոկոսն եւս կը շնորհէ պայմանաւ որ Անկելանոցին պատկանող եւ անոր կից պարտեզին մէջ վերաբուժական գործողութեան համար քանի մը սենեակներ շինուին: Ուստի կը հարցնէ, վարչական ժողովս կ'ընդունի՞ թէ ոչ. Երկար խորհրդածութիւն-ներէ յետոյ, որոնց գլխաւորներն էին 1. Թէ՛ Այն գումարը պիտի բաւէ: 2. Եթէ չբաւեր, ո՞վ պիտի լրացնէր պակասը: 3. Եթեմարդեւիւր որ բաւէր, եւ կամ տեղէ մը պակաս լրացուէր, առանց կարեւոր գործիքներու դատարկ չլնէր մը ինչ բանի պիտի ծառայէր: 4. Եթէ ապագային հարկ ըլլար Անկելանոցը ուրիշ տեղ փոխա-դրել, այն ասին ինչ պիտի ըլլար յիշեալ չէ՞քը: 5. Ո՞վ պիտի ձեռնարկէր եւ հսկէր մտադրեալ շինութեան վըսյ եւ այլն: Արտաշէս էֆ. Հիւրմիւլդ մի առ մի պատասխանելով կ'ըսէ՝ թէ ինքն յատակագիծ մը խնդրած էր ճարտա-րապետ Քարապաշ էֆ.է եւ Մաղար բժշկէ, եւ թէ ասոնց տուած յատակագիծն, եթէ գործա-դրուէր 800 օսմ. ոսկի կը կարոտէր. ուստի կ'ըսէ՝ թէ առ Ժամա քանի մը սենեակ միայն շինել մտադիր է: Եւ եթէ 240 օսմ. ոսկին չբաւէ, եւ Հոգաբարձութիւնն ալ չկարենայ ամենեւին յիշեալ շինութեան նպատակ, ինքն կը յուսայ թէ կարողայ ուրիշ տեղէ պակասը լրացնել: Իսկ եթէ ապագային Անկելանոցը այլուր փոխադրուի, աչատ են յիշեալ սենեակները քանդուելու: Ընտելութեան գործոյն գալով՝ կը յայտարարէ թէ ինքն անձամբ պիտի հսկէ եւ իր ընտրած ճարտարապետը պիտի սերէ:

Մեծպ. Վիշն էֆ. Գասապեան կ'ըսէ՝ թէ 850 ոսկոյ գումար մը անհրաժեշտ հարկ է այդպիսի շինութեան մը վերաբուժական գոր-ծիքներով միասին. ուստի լուսագոյն կը թուի եթէ քանի մը բժշկիչներէ Թանձնաժողով մը կազմուելով՝ այս խնդիրը ուսումնասիրուի: Վեր-ջապէս վարչական ժողովս, ինչպէս նաեւ Անկե-լանոցի Հոգաբարձութեան երկու անդամ Մեծպ. Պետրոս էֆ. Մաճհուպ եւ Պողոս էֆ. Շէր-պէթճեան, ուր մասնաւոր հրաւիրագրով ներկայ կը գտնուէին, միաբանութեամբ կ'ընդունին որ յիշեալ տեղոյն վըսյ կառուցուի առաջարկեալ չէ՞քը Մեծպ. Հիւրմիւլդ էֆ.ի ձեռնով, որուն

պիտի ընկերակցի նաեւ բոլոր մեր թողութեան
բանաջի շնորհակալութիւնն յայտնելէ յետոյ
Մեծագ. Հիւրմիւշը Արտաշէսէ կէ.ի. կը յանձնա-
րարէ Հոգաբարձական, մինչ այս վերջինը մեկ-
նած է, շնորհակալութիւնն նուիրելով զրկել իրեն
եւ Չամբէ Անայի իր կրկին նուիրատուութեանց
համար: (Գւ. Պար. ասեմ, վրէ. Ժ. Ժ.)

Մոմճեան Պողոս, այս ձեռնարկու մարդը,
վաճակաւոր որ մի գուցէ նախորդ կրկին ան-
գամեան պէս յարկաբարձին համար տրուած
բաժանորդագրութեան որոշումը դարձեալ ան-
գործադիր մնայ, կը սկսի մէն միայնակ կատարել
զայն, եւ մինչեւ 12 Մայիս պէտք եղած գու-
մարին կէսէն աւելի կը հայթայթէ, որուն ցու-
ցակը կը գտնենք Ազգ. Անկէլանոցին դիւանին
մէջ (Տր. 192): Բայց անոր պատճէնը դնելէն
տուա՞ր պիտի յիշատակենք որ Օրիորդ Յիրուհի
Չուխաճեան 3 Ռուսկէի Ներկայութեանց եւ
2 քանանց միացեալ Գնեսօցիոսաց պարա-
մուշները կը ղգէին Անկէլանոցին պայմանա-
տարին մշտնջենաւորապէս ձայնաւոր պատարագ
եւ պաշտօն մը մատուցանելու Անկէլանոցին
մատրան մէջ իր հանգուցեալ մերձաւորաց
յաւիտենական հանգստեան համար:

Յուցակ փոխառութեանց

Ս Եւփոսայ Անկէլանոցին երկրին անկէլներ
գտնուած հողին վրայ 6000 օսմ. ոսկի ծախքով
յարկաբարձին մը շինութիւնը որոշուած ըլլալով՝
այս գումարին կէսը՝ այսինքն 3000 օսմ. ոսկին
ստորագրեալ ազգայինք կ'ապահովեն, ստորա-
գրուած գումարներն ինքրուած պահուստ փոխ
տալու պայմանաւ:

աւել օսմ.

Պողոս Պետրոս Ժ. Կաթ. Պատրիարք	200
Յովհաննէս կէ. Ալեքսանդրի . . .	500
Գարաշանեան Յովհաննէս կէ. . . .	100
Մահմ. Կեան Բիւր. կէ.	200
Հերպէթեան Պողոս կէ.	100
Մոմճեան Պողոս կէ.	200
Ճամճեան Պողոս կէ.	100
Հալէպլեան Գրիգոր կէ.	25
Գասպեան Վիլէն կէ.	150
Հէգիմեան Միքայիլ կէ.	50

Այս փոխառութեան ստորագրութեանց 1625

12/25 Մայիս 1905

Բայց այս բաժանորդագրաց կէսը միայն իր
ստորագրած գումարը տուած է: Կ. Պատրիարքը
եւ Ալեքսանդրի Յովհ. կէ. իւրեք խոստացածը

անմիջապէս կու տան իբրեւ նուէր, ինչպէս նաեւ
Հէգիմեան Միքայիլ եւ Հալէպլեան Գրիգոր, իսկ
Գասպեան Վիլէն տոկոսն միայն կը հրաժարի:
Ուրիշ փոխառութեան ալ գրեթէ հարկ չմնար,
վասն զի նախախնամութիւնը ուրիշ մեծ բարե-
բարութիւն մ'եւս օգնութեան կը հասցեն այս
պահուստ Ազգ. Անկէլանոցին, որուն մանրամաս-
նութիւնը իր սեղը պիտի պատմենք: Առ այժմ
պիտի յիշատակենք նախ որ Յիրուհի Հերպէթ-
եան համաձայնեալ Պողոս կէ.ի. ձեռնը Ան-
կէլանոցին կը նուիրէ Արեւելեան երկայնու-
ղեաց 3, եւ Consolidé պետական փոխառու-
թեան 20 քանանց պարտաթուղթեր, զորս
գոհութեամբ կ'ընդունի Հոգաբարձութիւնը եւ
կը փութայ զրկել յետագայ շնորհակալաց նա-
մակները:

ՀՈԳԱԲԱՐԶՈՒԹԻՒՆ

Բանկալիք, Կ. Պողոս,

Ս. ԵՄԿՈՐ

25 Մայիս 1905

ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԵԼԱՆՈՑԻՆ

Հնորհապայք եւ գործադուլ Օրիորդ

Ս. Եւփոսայ Ազգ. Անկէլանոցին Հոգա-
բարձութիւնը շնորհապարտ որով կը փութայ
մատուցանել Չեզ յանուն իւր եւ միանգամայն
յանուն բազմաթիւ եւ տուապէս պատասխա-
րելու իւր երախտագրութեան Չեզ բրած ինք-
նայո՞ժար եւ վեճ մատուցանութեան փո-
խարէն:

Այս, Առաքելապետ Օրիորդ, ոչ միայն
երախտագրութեան, եւ պիտի ծնանք միշտ այս
ձեռն նուիրատուութեան համար, որով հայրենի
մարդասիրական հաստատութեան ապագայն
բոտ կարելոյն ապահովենք. այլ որովհետեւ
Չեզ այս գլխաւորութեան ցրցը շարժառիթ
եղաւ եւ միանգամայն նախանձեղ բարի օրինակ
մը այլ բարեւոր ազգային, որով հնարաւորու-
թիւն տրուեցաւ մեզի իւր ժամանակի մէջ կա-
ռուցանել այն փառաւոր շէնք, որուն ծրագիրը
նախապատարուած էր ժամանակի քի վեր, եւ
բարեբար ձեռքի մըման կը ազատէ բարեբաղնեւ
համար իբր հակա կողմը ազգաւոր բարեբաղ-
նեան, զորս եղաւ, Անկէլանոցին Օրիորդ, այս
փառաւոր կոթողին հիմն ու պատանդանը
պատարաւոր որ պիտի մնայ ի յիշատակ մշտնջե-
նաւոր եւ ի պարճման վեճ մը բնութեամբ
Չամբէան գերգաստանին:

Ապահով եղեք, Անկէլանոցին Օրիորդ, որ
մեր եւ հարեւաւոր պատասխարակ թշուառ-
ներու շրջանը շին միայն որ կ'արտայայտեն
այս շնորհակալութիւնը, այլ ի վեր լայն զամենայն
սիրտին ու միտքին նոյն, որ կը բռնեն այն ջերմ
մաղթանքներն՝ որ Չեզ եւ Անկէլանոցին եղբոր
երջանիկ կենաց երկարութեան եւ բարեբաղ-
նեան համար կը բարձրանան եւ պիտի բարձրա-
նան միշտ յոստ գահային Ամենաբարձրին:

2*

Ընդունեցեք, Շնորհափայլ Օրբորդ, մեր
խորին յարգանաց, մեծարանաց եւ շնորհակա-
լեաց հաւատարմքն

Ատենադպիր	Ատենապետ
Յովս. Ծ. Վ. Արկիւան	Պետրոս Մահճիւպ
Ա. Շնորհափայլ	
Օրբորդ Աննա Չամբլեան	
Բարիք	(Դւ. Ս. Եկ. Տր. 192)

ՀՈԳԱՐԱՐԱԴՈՒԹԻԱՆ Բանկայթի, Վ. Պոլսոյ,
Ս. ՅԱԿՈԲ 25 Մայիս 1905

ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԵԼԱՆՈՅ

Մեծաշուք Արտաշէն էֆ. Հիւրմիւլ

Մեր սրտագին շնորհակալութեանց մեծա-
զոյն մէկ բաժինն կը համարակինք մատուցու-
նել Ձեր Ազնուութեան այն եռանդուն գործու-
նէութեան համար, որ միշտ Ձեզի յառուկ
աղաքարական ջանասիրութեամբ ցոյց տուիք
Ազգային Անկեղանոցին ի նպատակ, յարգարմատ
ընելով այն բարերար Օրբորդն, որ սակաւա-
գիրքերով կ'անմահացնէ իւր անունը Անկեղանոցին
սարեգործող մէջ։ Այս, Մեծաշուք Տէր, այն բա-
րերար Անկէն ոչինչ ընդհատ արժանի եղաւ եւ
Ձեր Ազնուութիւնը Ազգին առջեւ իրաւամբ
բարերար միջնորդ, պատուաբեր անունաւ։

Դասեօթ էին արդէն ի վարդ, մինչեւ
բազմաց Ձեր աշին։ Զանգերն ի պայծառութիւն
մեր Հայ Աթոռիկէ Հասարակութեան այլեւայլ
Հաստատութեանց, եւ եթէ այսօր կ'որհնէք
Ատոնն եւ պիտի օրհնէք յաւեւ յիշատակն
այն Ազնուաբեր Օրբորդին, հաւատքի եղէք,
Մեծաշուք Տէր, թէ այս օրհնութեանց եւ յի-
շատակն մէջ անմահաց պիտի քանդակուի
Հիւրմիւլեան Արտաշէն էֆենտիի եւս անունը։

Ձեզք կրնաք ըստ արժանւոյն երախտագէտ
ցոյց տալ մեզ Ձեր Ազնուութեան, բայց
մեր պարտքը Ձեզի նկատմամբ թող կատարեն
այն հարկերաւոր օրհնեցող բերաններն տառա-
պեալ պատասխանաց, որ կը խնդրեն բարձրելոյն
Աթոռէն առաջնութիւն, երկար կեանք, երջանիկ
բարութիւն Ձեզ եւ Ձեր համայն ընտանեաց
այսօր եւ միշտ։

Հաճեցեք, Մեծաշուք Տէր, մեր խորին
յարգանաց մեծարանս ընդունել եւ անկեղծ
շնորհակալեաց հաւատարմքն

Ատենադպիր	Ատենապետ
Յովս. Ծ. Վ. Արկիւան	Պետրոս Մահճիւպ
	(Դւ. Ս. Եկ. Տր. 192)

Յարկարածին հիմարիկէք կը կատարուի
Ամենապատիւ Հոգեւոր Տեառն ձեռքը եւ ըն-
թերակալութեամբ Մահճի Հաճեան հրաժա-
րեալ Արքեպիսկոպոսին Եպիսկոպ եւ քահանայ
կարապետ Եպիսկոպոսին պարտոյ, բազմութիւ
քահանայից եւ ժողովրդոց, Ազգ. երեսփոխա-

նական ժողովոյ եւ վարչութեան անդամոց
ոմանց։ Հիման մէջ կը գրուի բիւրեղեայ շիշի
մէջ հետեւեալ յիշատակարանը գրեալ ի քար-
տեղ մագաղաթ՝ Կատարեցաւ հիմարիկութիւնս
յառաջում ամի հայրապետութեան Պողոսի
Պետրոսի Թ. Կաթողիկոս Պատրիարքին Հայոց
Ուղղափառաց, եւ ի Հոգաբարձութեան Անկե-
ղանոցին Պետրոս էֆ. Մահճիւպեան Առեւա-
պետի, Յովսէփ Ծ. Վ. Արկիւանի, Պողոս էֆ.
Մոմճեանի, Պողոս էֆ. Խամճեանի եւ Պողոս
էֆ. Շերպէթճեանի յամի Փրկչին 1905 եւ
Հայոց ՌԵԾԴԻ Եթովպեանսներորդ աւուր Յու-
նիսի։

Ապա կը կարգացուի ուղերձ մը Օսմա-
նեան Օգոստոսիան Վայսեր արեւշատութեան
համար, որուն օրով ու շնորհիւ կատարուեցաւ
այս հիմարիկութիւնս, եւ բոլոր հանդիսականք
ձայնակից եղան սոյն ուղերձին գոչելով միաբե-
րան Ամին։

Հանդիսութենէս ետքը Հոգեւոր Տէրը
կ'այցելէ Անկեղանոցին պատասխանելոյ եւ Հո-
գաբարձութեան սենեակը սակաւ ինչ հանգչե-
լով կը մեկնի։

Աթիւս նոյն օրը Հոգաբարձութիւնը ժո-
ղովքի գումարուեցով՝ կ'որոշէ որ այսուհետեւ
ով որ երեք անգամ յարգարար բացակայէ
ժողովէս առանց յայտնելու իր բանաւոր պատ-
ճառը ի գիր, նովին գործով հրաժարած հա-
մարուի։ Այս գումարման մէջ Միջայլէ Զօպա-
նեանը կը կոչէ ներքին տնօրէնութեան, որ պաշ-
տոնը բարեկիշատակ Մամանճեանի մահաւամբ
խափանուած էր։ Օգոստոս 3ի նիստովն ալ կ'ըն-
դունի Դոկտ. Անտոն Միսիսեանի աջարուժ
մաննագէտի առաջարկը, որով կը յայտնէր իր
փափաքը ձրի դարմանելու վարակեալները, պա-
տիւ համարելով Հիւանդանոցին ծառայութիւնը։
(Դւ. Ս. Եկ. Տր. 192)։

Իսկ Դոկտ. Մաղարեան, վերաբուժ Անկե-
ղանոցին, Պարիս երթալու հրաժեշտ առած
պահուէ՝ իր տեղը առժամայ փոխանորդ կը
կարգէ Դոկտ. Lacombe, վերաբուժ Հիւան-
դանոցին Գաղղիացոց, բայց Մաղարեանի ալ
եւս չգառնալ լուսելով՝ եւ իր փոխանորդին ալ
յաճախակի պաշտուէն բացալիս ինքն ինքն
(քուցէ իր պայմանին չգործադրուելուն պատ-
ճառաւ, որ է վերաբուժական սրահի շինութիւնը
արդէ գիտութեան պահանջին համեմատ)՝ Դոկտ.
Նաղարեան Պեկը կը Նախարարի Անկեղանոցին
վերաբուժութեան, եւ նա յօժարակամ կ'ըն-
դունի յետագայ պայմաններով Ա. վերաբուժու-

թեան վերաբերեալ ամեն պատասխանատուութիւն իր վրայ ըլլալ, Բ. Դովա. Խանձեանը իրեն նկիւնակայ օժանդակ տալ, եւ Գ. վայելել իր նախորդաց պէս տարին 500 ֆրանքի իրաւունքը իրեն ճամբու ծախքը, Այս պայմանները կ'ընդունուին, եւ յիշեալ Դովաորները պաշտօնավարել կը սկսին:

Յարկաբաժնին շինութիւնը 1906 Մարտ 22ին արգելուելով թաղապետութեան վեցերորդ շրջանակէն՝ Հոգաբարձութիւնը կը փութայ արգելքին բարձման կարեւոր միջոցներուն դիմել: Սապապողեան և Պատրիարք Հայրը կը յաջողի գոհացնել ֆաղաբապետ Ռեշիտ Պաշան շինուածեան տուրքին կէսը 85 օսմ, ոսկի միայն տալով, եւ շինութիւնը շարունակելու բերանացի հրաման ընդունիլ: Յանձնարումն ալ այն գումարէն 25 ոսկի եւս զեղելու յաջողութիւնը կ'ունենայ, եւ Ապրիլ 6 թուականաւ շինութեան վերսկսելու գրաւոր հրամանը, որով շնորհակալութեան նամակ մը կ'ուղղուի ֆաղաբապետ Ռեշիտ Պաշային:

Գրեթէ տարի մ'ետքը Յարկաբաժինը կ'աւարտի ճարտարապետութեամբ Միջայէլ Դուրիճեանի, որուն վերջին մասնագէտը՝ ոսկի օսմ, 700, կ'ընէ իր քսակին Յանձնարումներն անդամներէն Պողոս Մամիճեան: Դաքիոց Հաշիւները ներկայացուելով Ազգ. վըշ, Ժողովոյն կը հարցուի այս գումարին որո՞ւ արածուածեամբ արուած ըլլալ: Պողոս Մամիճեան գրպանէն հանելով բաժանորդագրութիւնն ցուցակը՝ գրանցողին վըշայ զնէ, որուն մէջ կային նաեւ Ժողովականներէն ոմանց անունները. ահաւախի՛ ես ասոնց արածութեամբ տուած եմ, կ'ըսէ, այն գումարը՝ մասնանիշ ընկող ջուլցակը... ասոնցմէ եւս առնուլ կը յոռամ, եւ կամ կ'ընամ կանխաւ արուած որոշողութեան համեմատ՝ գանձել մաս առ մաս Յարկաբաժնին վարձքն, եւ ապա յանձնել անոր մատակարարութիւնը պատուարած Հոգաբարձութեան, եւ այնպէս ալ կ'ընէ մինչեւ որ ձրի ներքին անօրէն կարգուի իր եղբայրը Յովհաննէս, որ երկու տարուան մէջ իր եղբոր պահանջը գանձելով՝ կը հեռանայ:

Այս իրադարձութեանց վրայ Մամիճեան Պողոս կը հրաժարի Ս. Յակոբայ Հոգաբարձութենէն, եւ Ազգ. վարչութիւնը գուշակելով որ անոր հրաժարումը հետեւանք են իր գիտողութեան, զոր ըրաւ վերջիշեալ 700 ոսկին անգնելոյց տալուն վըշայ, յաստիք Ժողովոյն բերանացի շնորհակալութիւն կը մատուցանէ Մամիճեանի,

որով դարձեալ իր Հոգաբարձական պաշտօնը կը շարունակէ:

Երաշէն յարկաբաժնին մէջ առաջին բնակողներն եղան Կալաթա Մառայի կայսերական ինկէնին հասաւաքի աշակերտները, զորս կը զետեղէ ճու Հասարակաց կրթութեան նախարարութիւնը առանց Հոգաբարձութեան հարցընելու, բայց վարձքը կը վճարէ, Յիշեալ աշակերտները ամիս մը եւ աւելի կը գիշերօթեն նոր յարկաբաժնին մէջ, վասն զի իրենց դպրոցին ննջարանները հրոյ ճարակ եղած էին 1907 Յունիսի մէջ, եւ տարեկան մեծ արձակուրդին իրենց երկիրը կը մէկնին թողլով իրենց պառնակած շէնքը ապտոտ ու կեղտոտ, որով հարկ կ'ըլլայ կարգ մը նորագութիւններ ընել: Այս հակա շէնքին կառուցման պատճառաւ վաճառուած են Անկելանցիս բոլոր զիրուցան կալուածները, անանի որ Ս. Յակոբ այսօր իր շրջափակէն դուրս քարաշէն տուն մը միայն ունի ի իստանբուլի փողոց Գերի-քէյսի, որուն համար Հոգաբարձութիւնը զինուան պիտի տայ նուիրաւ առ ճէպէճեան Յարկութեան եւ անոր քրոջ ամիսը 3 ոսկի օսմ. Սակայն այդ վաճառեալ կալուածոց փոխարժէքին գրեթէ ամենն ալ վերջին 10 անուցման կառուցման ծախսուած է, եւ յարկաբաժինը շինուած գլխաւորաբար նուիրատուութեամբ երկու բարերարաց, որոնց միոյն անունը ընթերցողին արդէն ծանօթ է, իսկ միւսինը պիտի կարգայ յետագայ էշերուն մէջ: Ազգ. վըշ, Ժողովը 1905 Հոկտ. 14 Նիստին մէջ զատապետան Ալիէն դեղաւաճառ կը յայտարարէ՝ թէ Եւրոպա բնակող բարերար ազգային մը մտադիր է 50.000 ֆրանք նուիրել Ս. Յակոբ Ազգ. Անկելանցիս իբրեւ Rente viagère եկամուտ զինանս: Առ այժմ կ'ուզէ անծանօթ մնալ եւ հասկնալ թէ ինչ պայմաններով կրնայ կտակել վերջիշեալ գումարը, ապա հոգութիւններ կը պահանջէ. եւ լսած ըլլալով Չամբշեանը ըրածը՝ կը փափաքի ասոնց կտակին վաւերագրող օրինակները տեսնել: Ժողովը յայտնելով հանդերձ աւետաբեր գասապետներն իր շնորհակալիքը՝ կը յանձնարարէ որ փութայ գոհացնել անծանօթ անձը, խորհրդակցիլ Անկելանցիս Հոգաբարձութեան հետ, միով ըրանի. ըստի որ Հասարակութիւնս չըզկուի մտադրեալ բարերարութենէն:

Գրեթէ ամիս ու կէս ետքը՝ Դեկտ. 9 Գասապետան Հոգաբարձութեան եւս կը հաղորդէ՝ թէ Տիկին Տիրուհի Ալլահիբեթի¹, ծնեալ Նադ-

¹ Այս Տիկինը կը պսակուի իր տունը ի քուրու-

լըքճեան, մտադիր է նուիրել Անկիւնոցիս 50.000 ֆրանք, սակայն 8% ուժ առ Հարիւր ցկեանս առնելու պայմանաւ: Հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ կ'ընդունի այս նուէրը եւ յարակից պայմանը, յենլով վըշ. ժողովոյ նմանորոշիկ առիթներու մէջ սուսա Հասնութեան վրայ, եւ կը խնդրէ Գասապեանէն գործին հետապնդումը, զոր յօժարակամ կը խոստանայ, եւ կ'որոշէ միանգամայն զընկել պէտք եղած փոխանորդագրոյն օրինակը ստորագրելու համար, ծանուցանելով կանխաւ Ազգ. վըշ. ժողովոյ:

Գասապեան դարձեալ Դեկ. 30 վարչութեան ժողովոյն մէջ կը կարգայ պաշտօնական նամակ մը, ուսկից կ'իմացուի՝ որ առ ժամս Վենետիկ գտնուող եւ հանգուցեալ Եաղըքճեան զեարուս էֆի ի դուստր 60 ամեայ Տիկին Տիրուհի Ալաշկերտեան որոշած է Ս. Յակոբ Անկիւնոցին 50.000 ֆրանքի գումար մը նուիրել պայմանաւ՝ որ ցորճայի ինքն կենդանի է՝ յիշեալ Անկիւնոցին իրեն տարեկան 8% տոկոս մը տայ, եւ այս գործոյս կատարման համար Տաճար Յովսէփ էֆ. ն իրեն փոխանորդ կը կարգէ: Ազգ. վարչութիւնը շնորհակալեօք կ'ընդունի այս նուէրը, եւ կը յանձնարարէ գրել զայս Անկիւնոցին Հոգաբարձութեան ազդարարելով միանգամայն՝ թէ Տաճար Յովսէփ եւ Գասապեան Վիշնէն էֆենդիներուն հետ կարեւոր ձեւակերպութիւնները կատարելէ եւ դրամը գտնանելէ յետոյ՝ ծանուցանէ վըշ. ժողովոյս թէ այդ գումարը որպիսի նպատակի պիտի գործածէ: Վարչութիւնը իր ջերմ շնորհակալութիւնները կը յայտնէ Գասապեանին, եւ կ'որոշէ թէ ինչպէս Ալաշկերտեան Տիկին Տիրուհւոյ՝ նոյնպէս ալ Տիւղ Ղեւոնդ Գեղի, քեռորդէի շնորհարարուհւոյն, եւ Տաճար Երուսաղէմ էֆ. ի շնորհակալութեան թուղթ գրել, որ սրտի մտօք սատարեցին գործոյն յաջողութեան: (Դւ. Ս. Յի. 89. 192):

1906 Յունուար 7 կաթողիկոսարանի սրահին մէջ ի ներկայութեան առեւտրայ փոխանորդ Արհիպատիս Սահակ Արքեպիսկոպոսի

էնթէ (Առօր) Ալաշկերտեան Պօղոսի հետ 1871 Մայիս 23 առաջին պատկեն օրը. իր փք տարի կենակցութենէ ետքը՝ երկու կողման հաւանութեամբ կը բաժնուին, որուն պատճառը կը կարծուի՝ ամբողջական անկարողութիւն: Երկուքն ալ կ'առանձնանան Ս. Բենեդիկտոսի վանքի ի գալութիւն, մին Գաղղիացի դէմութեան քոյրերուն քով, իսկ մյուսը՝ Լազարիսի քահանային: Ասի ստուգած ենք Ալաշկերտեանի Յակոբ Եղբորմէն:

Հաճեան¹ եւ Մէհմէտի պաշտօնէից՝ նուիրաւ յառաւին փոխանորդ Տաճար Յովսէփ էֆ. 50.000 ֆրանքի փոխանակագիրը կը յանձնէ Հոգաբարձութեան Ասենապետ Մահմէտ Գե. սրտի եւ Գանձապետ Հէրպիճեան Պօղոսի, որոնք չորս օր ետքը գումարեալ նիստին մէջ Ս. Յակոբայ Հոգաբարձութեան կը յանձնեն զայն: Այս նուիրատուութիւնը կը հաստատուի Հէօմէթը Շէրիով:

Ազգ. վարչութեան ժողովական անգամներէն ոմանք լսած ըլլալով՝ որ հանգուցեալ Տաճար Պաշայի որդեգիր աղէկը վախճանէ է ի Պարիս՝ ստուգելու համար կը հարցապնդեն այս լուրը նոյն ապրիլ եւ ամիս 13 նիստին մէջ, որուն համար կ'ըսուի թէ 30.000 օսմ. ոսկի թողուցած ըլլայ աղէկան՝ պայմանաւ որ երկէ չամուսնանայ եւ կամ անգամայն մեռնի, մասհաւընէ ետքը Ս. Յակոբայ մնայ յիշեալ գումարը: Տաճար Պաշայի թուղթերը գրասեղանի վրայ կը հանուին, բայց անոր կտակին վերաբերեալ յիշատակագիր մը չի գտնուիր: Վ'որոշուի ուրեմն գրել Գեղը. Տ. Պետրոս Ծ. Վ. Արեւելահին, Պարիսիցական փոխանորդ ի Պարիս, եւ տեղեկանալ թէ վերոյշեալ աղէկը մեռած է՝ թէ ողջ, եւ թէ հանգուցեալ հայրը այնպիսի կտակ է՝ ըրած է: Այս գրութեան մէջ կը նշանակուի նաեւ անոր հասցեն, որ է Mademoiselle Davoud, en Religion Soeur Therèse Catharine, Religieuse de la Visitation, Rue de Vaugirard 110, Paris, Այս նամակին, մեր առած տեղեկութեանց համեմատ, պատասխան եկել է թէ ինքզինքներեւ եղած անձը ողջ է, միւս կետը անծանօթ կը մնայ մեղեւ: Յարող նիստին համար ալ կ'որոշուի նոյնպէս գրասեղանի վրայ հանել 1863ի յուղարկութեանց կանոնագիրը իմանալու համար թէ Ս. Յակոբ իսկապէս կը պարտի՝ արգեօք աղքատ ննջեցեալ համար Ս. Երրորդութիւն եւ Ս. Յահան Ոսկեբերան եկեղեցեաց 50 դահեկան տալու: Ինքզինքն ուսումնասիրութիւնը վարչութեան Յունուար 27 նիստին մէջ կը յանձնուի Գասապեան Վիշնէի, որուն տեղեկագրոյն վրայ կ'որոշուի՝ տալ Երրորդութեան Եկեղեցւոյն տարին 200, իսկ Ոսկեբերանի՝ 1000 դահեկան եւ ըստ այսմ կը գրուի որուն որ անկ է Միշէ Ազգ. վարչութիւնը այս խնդիրներով կը զբաղէ, Հոգաբարձութիւնն ալ հետագայ շնորհակալեաց նամակները կ'ուղղէր:

1 Պօղոս զեարուս ԺԲ Սապպազեան Հայ կաթողիկէի կաթողիկոս Պատրիարքը Հոռմ կը գտնուէր այս պահուս:

Ս. ՅԱԿՈԲ Կոստանդնուպոլիս,
ԱԶԻՅԱՆԻ ԱՆՎԱՆՆԵՐՈՑ 18/31 Յունուար 1906
Ի ԲԱՆԱՍԼԻԻ

Ընորհափայլ եւ Գործադրութիւն Օրինորդ

Նուիրական եւ յոյժ հաճելի պարտք մ'է որ կը կատարենք այսօր, մատուցանելով Ձեզ մեր խորին, անկեղծ եւ արտաբերական շնորհակալութիւններն Ս. Յակոբայ Ազգային Հաստատութեան ի նպաստ՝ Ձեր բրած վեճ բարերարութեան համար, եւ միանգամայն թարգման կը հանդիսանանք այն բարեգործական Հաստատութեան մէջ գտնուող բազմաթիւ պատասպարեւոյ երախտագարտ զգածմանց:

Այ փութեմբ միանգամայն ծանուցանել թէ Ձեր օրինաւոր փոխանորդ Մեծ. Տամատ Յովսէփ Էֆ. է ընդունեցանք 50,000 Փրամքի դոմանը:

Արդարեւ, Ընորհափայլ Օրինորդ, Ձեր աշնուական գերդաստանի մասնագական ոչ զոյգ բարեմանութիւններէն մին է այսպիսի բարեգործական զգածմանը, եւ անհամար են այդ գծախոսներն, որոնց ցաւերը թեթեւցուցած են արիւնքներ, այս անգամ նոր եւ յայտնի ցոյց մ'եւս սուրբ ի հետուս եւ ինքնաշարժ Ձեր ազնիւ արտին մարդասիրական բնածին զգածմանց վեճ եւ առատածնուն նուիրատուութեամբ, որուն յիշատակը, ապահով եղէք, անմուտց եւ մշտատեւ պիտի մնայ ոչ միայն Հաստատութեան յիշատակաբանաց՝ այլ նաեւ աղքատին շնորհապարտ սրտին մէջ, եւ որոնք երախտագրութեամբ կ'օրհնեն եւ պիտի օրհնեն միշտ զՁեզ եւ Ձեր սիրեցեալ ծնողաց յիշատակը:

Խնդրենք, Ընորհափայլ Օրինորդ, հաճեցէք ընդունիլ այս առթիւ մեր արտաբերական եւ խորին շնորհակալութիւնքն եւ ամենախորին յարգանաց հաւատարմքն:

Ատենադպիր Ատենապետ
Յովս. Թ. Վ. Արիկեան Պետրոս Մահճիւպ

Ընորհափայլ
Օրինորդ Տիրուհի Եղալըքճեան

Վէնետիկ, Հոթել Վարբէ:

(Դւ. Ս. Եֆ. Տր. 192)

Ս. ՅԱԿՈԲ Կոստանդնուպոլիս,
ԱԶԻՅԱՆԻ ԱՆՎԱՆՆԵՐՈՑ 18/31 Յունուար 1906
Ի ԲԱՆԱՍԼԻԻ

Մեծաշուք Պէյ

Ընորհափայլ Օրինորդ Տիրուհի Եղալըքճեանի Ս. Յակոբայ Ազգային Հաստատութեանս բրած սիրալիր նուիրատուութեան առթիւ նուիրական եւ հաճելի պարտք կը համարենք մեր արտադին շնորհակալութեանց մեծագոյն մէկ բաժինն եւս մատուցանել Ձեր Ազնուութեան այն սիրայօժարութեան համար, որով այն

ազնիւ Օրինորդին փոխանորդութիւնք ստանձնելով՝ մեծ գիւրտութիւն ընձեռեցիք եւ մասնակից եղաք այն առատածնուն բարեգործութեան, որով այն բարերար Օրինորդն ունեւոր գիւրտով կ'անմահացնէ իւր անունն Հաստատութեանս օրագրոց մէջ: Այս Մեծաշուք Տէր, այն բարերար Անձնէ ոչինչ ընդհատ արժանի եղաւ եւ Ձեր Ազնուութիւնը մեր եւ ազգային երախտագրութեան, եւ ի միասին արձանագրելիք Ձեր եւս Ազնիւ Անունն մեր բարերաց յիշատակարանաց մէջ:

Միանգամայն ապահով եղէք, Մեծաշուք Տէր, որ Հաստատութեան մէջ պատասպարեալ հարիւրաւոր տառապայալք օրհնեցու բերանով կը խնդրեն Բարձրելոյն Աթոռն Ձեզ համար առողջութիւն, երկար կեանք, երջանիկ բարութիւն այսօր եւ միշտ:

Խնդրենք, Մեծաշուք Տէր, հաճեցէք ընդունել այս առթիւ մեր ամենախորին յարգանաց հաւատարմքն:

Ատենադպիր Ատենապետ
Յովս. Թ. Վ. Արիկեան Պետրոս Մահճիւպ

Մեծաշուք

Վէնետիկ Տիւզ

Ի Բարդի

(Դւ. Ս. Եֆ. Տր. 192)

Ասոր օրինակը կը ղրկուի նաեւ Գասպեան Վիլհէլմի ի Վ. Պոլիս եւ Տամատեան Յովսէփայ ի Պարիս: Այս վերջնայ յարգութիւնը կը ղրկուի նաեւ Հէօմէթը շէրիին օրինակը եւ 50,000 Փրամքն ընկալագիրը: Նամակ մ'ալ կը գրուի տարւոյս Յունուար 27ին հետեւեալ իմաստով՝ որ Անկիւնոցս ցարդ այսպիսի սովորութիւն մը չունի եւ չ'ուզեր ստեղծել, միայն թէ կը խոստանայ Բ. կամ Գ. աստիճանի մեռելակարգով յուրարկուած ննջեցեալներէն մուտքի տուրք մը առնուլ եւ զայն յանձնել մատակարարութեանը: Այս պատասխանը կու տար գերեզմանատան Հոգաբարձութեան անցեալ տարւոյ Գեկեմ. 13 նամակին, որով կը խնդրէր տուրքներէն նուէր մը յատկացնել աստի առ յապա Անկիւնոցին ննջեցեալներուն համար: Եւ նուար 30 թուակիր նամակ մ'ալ Ազգ. վարդապետնէ Հոգաբարձութեան կը հասնի, որով կը հրամայուէր ղրկել ոչ միայն անցեալ տարւոյ հաշիւները, այլ նաեւ Անկիւնոցին անշարժ ընչեղ եւ կարասեաց ցուցակը, որ հազիւ թէ առաջիկայ Ապրիլին կը ղրկուին:

(Զոր.-ն.-ի.) Հ. ԻՍԱՀԱՆ Վ. ՍՐԱՊԵՆԱՆ
Միաբան Ամոտնամ:

